



ՈՒՍՈՒՑՈՒՅԻՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԱՏՈՒԳՈՒՄ

2022

ՔԻՄԻԱ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ


ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՝ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-զրույկի էջերի դաստիք մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

- 1** Տրված է հիմնական վիճակում երկարի ատոմի 3-րդ և 4-րդ էներգիական մակարդակներում էլեկտրոնների դասավորությունը.



Տառերով նշված էլեկտրոններից որի՞ն (որո՞նց) է (են) համապատասխանում ստորև տրված քվանտային թվերը:

$$n = 3, \quad \ell = 2, \quad m_\ell = -1, \quad m_s = +1/2$$

- 1) F, Q
- 2) T
- 3) E
- 4) U, Q

- 2** Քանի՞ էլեկտրոն է առկա NH_4^+ իոնում:

- 1) 18
- 2) 11
- 3) 10
- 4) 8

- 3** Տրված են հետևյալ ուրվագրերը.

- 1) $\text{H}^+ + \text{H}_2\text{O} \rightarrow \text{H}_3\text{O}^+$
- 2) $\text{Ba}^{2+} + \text{SO}_4^{2-} \rightarrow \text{BaSO}_4$
- 3) $\text{H}^+ + \text{NH}_3 \rightarrow \text{NH}_4^+$
- 4) $\text{H}_2\text{O} + \text{HF} \rightarrow \text{H}_3\text{O}^+ + \text{F}^-$
- 5) $\text{Ag}^+ + \text{Cl}^- \rightarrow \text{AgCl}$
- 6) $\text{CH}_3\text{NH}_2 + \text{HCl} \rightarrow \text{CH}_3\text{NH}_3^+ + \text{Cl}^-$

Ո՞ր շարք են ներառված դոնոր-ակցեպտորային մեխանիզմով կովալենտային կապի առաջացման օրինակների համարները:

- 1) 3, 4, 5, 6
- 2) 1, 3, 4, 6
- 3) 2, 3, 4, 6
- 4) միայն 3 և 6

4

Համապատասխանեցրե՛ք քիմիական ռեակցիաների ընդհանուր տեսքով գրված իոնային հավասարումների ձախ մասերը և դրանց իրական մոլեկուլային հավասարումների ձախ մասերի ուրվագրերը:

Իոնային հավասարում	Ելանյութերի բանաձևեր
1) $2\text{HR} + \text{Me(OH)}_2 \rightarrow$	U) $\text{H}_2\text{S} + \text{CsOH} \rightarrow$
2) $2\text{H}^+ + 2\text{R}^- + \text{Me(OH)}_2 \rightarrow$	F) $\text{HF} + \text{Zn(OH)}_2 \rightarrow$
3) $2\text{HR} + \text{Me}^{2+} + 2\text{OH}^- \rightarrow$	Q) $\text{CH}_3\text{COOH} + \text{Ba(OH)}_2 \rightarrow$
4) $2\text{H}^+ + 2\text{R}^- + \text{Me}^{2+} + 2\text{OH}^- \rightarrow$	T) $\text{HCl} + \text{Sr(OH)}_2 \rightarrow$
	E) $\text{H}_3\text{PO}_4 + \text{LiOH} \rightarrow$
	O) $\text{HNO}_3 + \text{Mg(OH)}_2 \rightarrow$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշգույն:

- 1) 1F, 2Q, 3T, 4U
- 2) 1U, 2Q, 3T, 4E
- 3) 1F, 2Q, 3T, 4E
- 4) 1U, 2T, 3U, 4T

5

Տարբեր դեղապատրաստուկներում էթիլսպիրտի առկայությունը հաստատում են ըստ ծծմբական թթվի միջավայրում կալիումի երկրրումատի հետ ընթացող գունային ռեակցիայի, որի ընթացքում սպիրտն օքսիդանում է մինչև ածխածնի աստմների «0» միջին օքսիդացման աստիճան, առաջացնելով ----- և քրոմի (III) աղերին բնորոշ կանաչ գունավորում: Ո՞ր շարք է ներառված բաց թողած բառը և այդ ռեակցիայի հավասարման գործակիցների գումար:

- 1) կարբոնաթթու, 31
- 2) ածխածնի(IV) օքսիդ, 28
- 3) ածխածնի(II) օքսիդ, 20
- 4) ալդեհիդ, 22

(6 - 7). Աղի 0,24 մոլ քանակով նմուշը ջերմային քայքայման ենթարկելիս ստացվել են 19,2 գ մազնեզիումի օքսիդ, 10,56 գ ածխածնի (IV) օքսիդ և 4,32 գ ջուր:


6 Ո՞րն է աղի քիմիական բանաձևը:

- 1) $MgCO_3$
- 2) $MgCO_3 \cdot CaCO_3$
- 3) $Mg_2H_2CO_5$
- 4) $MgH_2C_2O_6$

7 Աղեղի ո՞ր դասին է պատկանում այն.

- 1) հիմնային
- 2) թթվային
- 3) կրկնակի
- 4) չեղոք

8 Ֆոռոր, ծծումբ և ածխածնին տարրերի ատոմներ պարունակող թթուներից մեկի մոլեկուլի կառուցվածքային բանաձևը հետևյալն է.




Որքա՞ն է ածխածնին և ծծումբ տարրերի ատոմների օքսիդացման աստիճանների արժեքները այդ մոլեկուլում՝ համապատասխանաբար:

- 1) -4 և -6
- 2) +4 և +4
- 3) -4 և +4
- 4) +4 և +6

9

Գծագրի վրա տրված են կատալիզատորի առկայությամբ և առանց դրա ընթացող ջրածնի պերօքսիդի քայլայման ռեակցիաների էներգիական կորերը:

Ո՞ր շարք է ներառված կատալիզատորի առկայությամբ ընթացող ռեակցիայի ակտիվացման էներգիան և ջերմման ֆեկտորը:



ռեակցիայի ընթացք

- 1) E_1, E_2 - E_1
- 2) E_4, E_3 - E_4
- 3) E_3, E_4-E_3
- 4) E_2, E_1 - E_2

10

Ո՞ր գույզի նյութերը ամբողջությամբ կհիդրոլիզվեն:





- 1) $(\text{NH})_2\text{S}$ և Na_2S
- 2) Na_2S և CuS
- 3) FeS և Al_2S_3 .
- 4) CaC_2 և Ca_3P_2

11

Երեք տարբեր ֆիզիկական պայմաններում չափել են նույն քանակով ջրածնի ծավալը.

- I 0°C ջերմաստիճան և 1 մթն ձնշում
- II 0°C ջերմաստիճան և 2 մթն ձնշում
- III 273K ջերմաստիճան և 0,5 մթն ձնշում

Տրված դիագրամներից ո՞րն է ճիշտ արտացոլում չափումների արդյունքները:



(12-13) Տրված են քիմիական ռեակցիաների հետևյալ հավասարումները.

- ա) $\text{Cu}(\text{OH})_2 + 2\text{HNO}_3 = \text{Cu}(\text{NO}_3)_2 + 2\text{H}_2\text{O}$
- բ) $\text{MgSO}_4 + 2\text{NH}_4\text{OH} = \text{Mg}(\text{OH})_2 \downarrow + (\text{NH}_4)_2\text{SO}_4$
- շ) $\text{Pb}(\text{OH})_2 + 2\text{HF} = \text{PbF}_2 \downarrow + 2\text{H}_2\text{O}$
- դ) $\text{Cu}(\text{OH})_2 + 2\text{CH}_3\text{COOH} = (\text{CH}_3\text{COO})_2\text{Cu} + 2\text{H}_2\text{O}$
- ե) $\text{FeCl}_3 + 3\text{KSCN} = \text{Fe}(\text{SCN})_3 + 3\text{KCl}$





12 Այդ հավասարումներից ո՞րը (որո՞նք) չունի (են) ոչ իոնային, և ոչ կրծատ իոնային հավասարումներ:

- 1) գ, դ
- 2) գ
- 3) բ
- 4) ա, ե

13 Այդ հավասարումներից ո՞րը (որո՞նք) ունի (են) իոնային հավասարում, սակայն չուն(են)ի կրծատ իոնային հավասարում:

- 1) դ
- 2) բ, ե
- 3) ա
- 4) ա, զ

14 Ո՞ր զույգի գծապատկերներում են ձիշտ պատկերված ջրածնային կապը ֆոռրաջրածնի և ամոնիակի ջրային լուծույթներում: 1)



15

Օքսիդացման-վերականգնման ռեակցիաները հնարավոր է հավասարեցնել նաև լստ զանգվածի պահպանման օրենքի, տարբեր գործակիցների միջոցով, սակայն դրանք կարող են լինել ոչ ճիշտ: Օրինակ.


- ա) $3\text{H}_2\text{O}_2 + 2\text{KMnO}_4 + 3\text{H}_2\text{SO}_4 = 4\text{O}_2 + \text{K}_2\text{SO}_4 + 2\text{MnSO}_4 + 6\text{H}_2\text{O}$
 բ) $5\text{H}_2\text{O}_2 + 6\text{KMnO}_4 + 9\text{H}_2\text{SO}_4 = 16\text{O}_2 + 3\text{K}_2\text{SO}_4 + 6\text{MnSO}_4 + 14\text{H}_2\text{O}$
 գ) $5\text{H}_2\text{O}_2 + 2\text{KMnO}_4 + 3\text{H}_2\text{SO}_4 = 5\text{O}_2 + \text{K}_2\text{SO}_4 + 2\text{MnSO}_4 + 8\text{H}_2\text{O}$
 դ) $12\text{H}_2\text{O}_2 + 4\text{KMnO}_4 + 6\text{H}_2\text{SO}_4 = 11\text{O}_2 + 2\text{K}_2\text{SO}_4 + 4\text{MnSO}_4 + 18\text{H}_2\text{O}$

Բերվածներից ո՞րն (որո՞նք) է(են) ճիշտ հավասարեցրած:


- 1) բ, գ
- 2) գ
- 3) ա, բ, դ
- 4) ա, բ, գ, դ

16

Գրաֆիկի վրա ցույց է տրված հետևյալ ռեակցիայի ընթացքում A և B նյութերի կոնցենտրացիաների փոփոխությունը.




Ինչի՞ է հավասար C նյութի կոնցենտրացիան (մոլ/լ) ռեակցիան սկսելուց 8 վրկ հետո:



- 1) 2
- 2) 4
- 3) 6
- 4) 0,5

17 Քիմիական ռեակցիաների հետևյալ ուրվագրերում վերականգնել ծածկագրված U , F , Q , T , E նյութերի քիմիական բանաձևերը.




Որպես պատասխան ընտրել դրանցից միայն բարդ նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:

- 1) 251,5
- 2) 219,5
- 3) 215,5
- 4) 267,5

18 Երկու բաժակի մեջ լցրել են մեկական լիտր ջուր: Առաջինի մեջ ավելացրել են 30 գ U նյութ, իսկ երկրորդի մեջ՝ նույն զանգվածով F նյութ: Այնուհետև լուծույթներից յուրաքանչյուրն ինտենսիվ խառնելով տաքացրել են մինչև 75°C ջերմաստիճան: Այդ պայմաններում ինչպիսի՞ լուծույթներ կստացվեն բաժակներում:

Առաջադրանքը կատարելիս կիրառեք գծագիրը, որի վրա տրված են U և F նյութերի ջրում լուծելիության ջերմաստիճանից կախվածության գրաֆիկները:



- 1) F - ի լուծույթը կլինի հագեցած, U - ի լուծույթը՝ չհագեցած:
- 2) Երկու լուծույթներն ել կլինեն հագեցած:
- 3) Երկու լուծույթներն ել կլինեն չհագեցած
- 4) U - ի լուծույթը կլինի հագեցած, F - ի լուծույթը՝ չհագեցած:

19 Ո՞ր շարք են ներառված հիմնային միջավայրում երկաթի (III) քլորիդի և քլորի փոխազդեցության ռեակցիայի արգասիքները:

- 1) Fe(OH)_3 , KClO , H_2O
- 2) K_2FeO_4 , KCl , H_2O
- 3) $\text{K}[\text{Fe(OH)}_4]$, KCl , H_2O
- 4) KFeO_2 , HCl , H_2O

20 Ո՞ր շարք է ներառված համապատասխան պայմաններում ամոնիումի հիդրոսուլֆիտի հետ փոխազդող նյութերի բանաձևերը:

- 1) HCl , NH_3 , NaOH , NO
- 2) NH_3 , NaOH , SO_2
- 3) Cl_2 , NH_3 , N_2O
- 4) HCl , Cl_2 , NH_3 , NaOH

21 Կալիումի հիդրոկարբոնատի և կալիումի հիդրոֆոսֆատի ջրային լուծույթներում լակմուսը ձեռք է բերում կապույտ գույն, քանի որ.
ա) հիդրոկարբոնատ իոնի հիդրոլիզի աստիճանը մեծ է նրա դիտուման աստիճանից
բ) հիդրոֆոսֆատ իոնի հիդրոլիզի աստիճանը մեծ է նրա դիտուման աստիճանից
գ) հիդրոկարբոնատ իոնի հիդրոլիզի աստիճանը փոքր է նրա դիտուման աստիճանից
դ) հիդրոֆոսֆատ իոնի հիդրոլիզի աստիճանը փոքր է նրա դիտուման աստիճանից

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

- 1) զ, դ
- 2) ա, բ
- 3) բ, դ
- 4) ա, բ, զ

22 Զրում չլուծվող U նյութ պարունակող փորձանոթում Բ նյութի ջրային լուծույթ ավելացնելիս U նյութը լուծվեց և միաժամանակ անջատվեց սուր հոսով անզույն զագ: Նյութերի հետևյալ շարքից՝ 1) CaCO_3 , 2) BaSO_4 , 3) HCl , 4) BaSO_3 , 5) H_2SiO_3 որը՝ նք կարող են լինել U և Բ նյութերը համապատասխանաբար:

- 1) 4 և 3
- 2) 3 և 4
- 3) 2 և 5
- 4) 1 և 5

23

Պրոպինը համապատասխան պայմաններում ենթարկել են ցիկլային տրիմերացման և ստացել համապատասխան արոմատիկ միացություն(ներ): Ո՞րն է ստացված ցիկլիկ միացության(ների) մոլեկուլ(ներ)ում առկա տեղակալիչների դիրքերը ցույց տվող թվերի շարքը:

- 1) 1,2,3 և 1,2,4
- 2) 1,2,4 և 1,3,5
- 3) 1,2,3; 1,2,4 և 1,3,5
- 4) 1,2,3

(24-25). Իրականացրել են եռափուլ սինթեզ ըստ հետևյալ ուրվագրի.

2-մեթիլպրոպանոլ-1 → U → F → 2,2,3,3 -քառամեթիլբութան:

24

Որո՞նք կարող են լինել U և F օրգանական միացությունները:

- 1) բութեն-1, 2-քլորբութան
- 2) բութեն-2, 2-քլորբութան
- 3) մեթիլպրոպեն, 1-քլոր-2-մեթիլպրոպան
- 4) մեթիլպրոպեն, 2-քլոր-2-մեթիլպրոպան

25

Ի՞նչ ազդանյութեր կարող են կիրառվել երկրորդ և երրորդ փուլերի իրականացման նպատակով.

- 1) HCl, NaOH
- 2) HCl, Na
- 3) Cl₂, Mg
- 4) Cl₂, Zn

26

Ինչպես է փոփոխվում ածխածնի ատոմի կեկտրոնային օրբիտալների հիբրիդացումը տրված փոփոխականությամբ: *Մեթանաթթու → Ածխածնի(IV) օքսիդ*

- 1) $sp^2 \rightarrow sp$
- 2) $sp^3 \rightarrow sp$
- 3) $sp^3 \rightarrow sp^2$
- 4) $sp \rightarrow sp^2$

27

Թվարկած ո՞ր հատկությունները կունենա օլեինաթթվի եռզլիցերիդի հիդրոլիզի արդյունքում ստացված լուծույթը:

- Կզունազրկի յոդի լուծույթը:
 - Թարմ պատրաստված պղնձի(II) հիդրօքսիդի հետ տաքացնելիս կառաջացնի կարմիր (աղյուսագույն) նստվածք:
 - Թարմ պատրաստված պղնձի(II) հիդրօքսիդի հետ կառաջացնի վառ կապույտ գույնի լուծույթ:
 - Յոդի լուծույթի հետ կառաջացնի կապույտ գունավորում:
- ա,բ
 - գ, դ
 - ա, զ
 - բ, դ

28

Բրոմաջուր պարունակող չորս փորձանոթներից յուրաքանչյուրին ավելացրին.


I – բենզոլ, II – մեթիլբենզոլ, III – անիլին, IV – ֆենոլ

Ո՞ր փորձանոթում կառաջանա սպիտակ նստվածք:

- III և IV
- II, III և IV
- և' I, և' II, և' III, և' IV
- I և II

29

Գյուկոնզի (I փորձանոթ), սախարոզի (II փորձանոթ) ջրային լուծույթներ և օսլայի կախույթ (III փորձանոթ) պարունակող փորձանոթներից յուրաքանչյուրի պարունակությունը թթվեցրին, տաքացրին և ստուգեցին «արծաթահայելու» ռեակցիայով:



Ո՞ր փորձանոթ(ներ)ում կառաջանա «արծաթահայելի»:

- միայն I-ում և II-ում
- միայն I-ում և III-ում
- և' I-ում, և' II-ում, և' III-ում
- միայն I-ում

30


Հետևյալքիմիական բանաձևն ունեցող ալկաններից որի՞ իզոմերներից մեկը ունի միայն մեկ միագլորածանցյալ և երեք իզոմեր երկգլորածանցյալներ.

ա) C_5H_{12} , բ) C_8H_{18} , զ) $C_{11}H_{24}$, դ) $C_{14}H_{30}$:

- 1) դ
- 2) Բ
- 3) զ
- 4) ս

31

Տրված է քիմիական ռեակցիաների հավասարումների հատվածներ (աջ կամ ձախ մասերը):



Համապատասխանեցրեք հարցերը ռեակցիաների հավասարումների հատվածների համարների հետ:

ա) Ո՞րն է էսթերացման ռեակցիայի հատված:

բ) Ո՞ր ռեակցիայի միջոցով է հնարավոր ստանալ մեթան:

զ) Ո՞ր ռեակցիայի ընթացքում կարող է առաջանալ ամոնիումի ացետատ:

դ) Ո՞ր ռեակցիայի արդյունքում է ստացվում քլորալ (եռքլորէյտանալ):

ե) Ո՞ր ռեակցիայի ելանյութ է ֆենոլը:

զ) Ո՞ր ռեակցիայի օրգանական վերջանյութը կարող է հանդիսանալ 8-րդ ռեակցիայի ելանութերից մեկի միափուլ սինթեզի համար որպես ելանյութ:


32

Հետևյալ բանաձևերն ունեցող նյութերի շարքից՝

1) $C_6H_5 - CH_2Cl$, 2) $C_6H_5(NO_2)_3$, 3) $C_6H_5 - CH_3$, 4) CH_4 , 5) $C_6H_5(NO_2)_3 - CH_3$,

6) C_2H_2 , 7) CH_3COONa , 8) C_6H_6

որո՞նք կարող են լինել *w, p, q, η, t* նյութերն ըստ փոխարկումների հետևյալ շղթայի:



Համապատասխանեցրեք ըստ շղթայի ստացվող նյութերը՝ (*w, p, q, η, t*) և դրանց համարները:


33

Անիրաժեշտ է քիմիական եղանակով մաքրել որոշակի խառնուկ պարունակող հետևյալ նյութերի ջրային լուծույթները: Համապատասխանեցրեք ք մաքրվող նյութի և խառնուկի ու կիրառվող ազդանյութի քիմիական բանաձևերը:

Մաքրվող նյութ և խառնուկ	Ազդանյութ	
w) HF-ը	HCl-ից	1) H ₂ S
p) KI-ը	K ₂ CO ₃ -ից	2) AgF
q) Na ₂ SO ₄ -ը	(NH ₄) ₂ SO ₄ -ից	3) HI
η) NaNO ₃ -ը	Na ₃ PO ₄ -ից	4) KF
t) KNO ₂ -ը	K ₂ SiO ₃ -ից	5) NaOH
o) HNO ₃ -ը	H ₂ SO ₄ -ից	6) AgNO ₃
		7) HNO ₂
		8) Ba(NO ₃) ₂
		9) NaCl

34

Ո՞ր պնդումներն են ճիշտ ցինկ-պղնձային զալվանական էլեմենտի աշխատանքի ընթացքի վերաբերյալ.



- 1) սուլֆատ իոնները աղային կամրջակով տեղաշարժվում են դեպի ցինկի լիսակեմենտ
- 2) գումարային ռեակցիայի հավասարումն է. $CuSO_4 + Zn = ZnSO_4 + Cu$
- 3) գումարային ռեակցիայի հավասարումն է. $Cu + ZnSO_4 = Zn + CuSO_4$
- 4) ցինկի թիթեղը կատարում է անողի դեր
- 5) պղնձի թիթեղի զանգվածը փորրանում է
- 6) էլեկտրոններն արտաքին շղթայում շարժվում են անողից դեպի կատոդ
- 7) պղնձի սուլֆատի կոնցենտրացիան մեծանում է
- 8) ցինկի թիթեղի զանգվածը փորրանում է

Պատասխանը ներկայացնել ընտրած համարների աճման կարգով:

35 Ի՞նչ առավելագույն զանգվածով (մգ) իզոմեր եռապեպտիդների խառնուրդ կստացվի համապատասխան պայմաններում $18,75$ գ գլիցինի, $19,58$ գ ալանինի և $24,15$ գ սերինի փոխազդեցությունից:

36 Ածխածին տարրի ^{14}C ռադիոակտիվ իզոտոպի կիսատրոհման պարբերությունը 5700 տարի է: Որոշակի պահից սկսած, քանի՝ տարի անց $1,52$ գրամ զանգված ունեցող ^{14}C -ի պատրաստուկի զանգվածը կպակասի և կդառնա $0,095$ գրամ:

37

Փակ անոթում տեղավորված ածխածնի (II) օքսիդի և ջրային գոլորշու համապատասխանաբար 3 մոլ/լ և 5 մոլ/լ կոնցենտրացիաներով խառնուրդը տաքացնելիս ստեղծվել է $\text{CO}_{(q)} + \text{H}_2\text{O}_{(q)} \rightleftharpoons \text{CO}_{2(q)} + \text{H}_{2(q)}$ հավասարակշռությունը: Որքա՞ն է ածխածնի (II) օքսիդի հավասարակշռային կոնցենտրացիան (մմոլ/l), եթե փորձի պայմաններում հավասարակշռության հաստատունի արժեքը՝ $K_h = 1$:

(38-39). Երկու տարրերի առաջացրած զազային ջրածնային միացությունների հավասարամոլային խառնուրդում, որում տարրերից մեկը երկվալենտ է, իսկ մյուսը՝ քառավալենտ, ջրածին տարրի զանգվածային բաժինը 0,12 է:

38

Որքա՞ն է այդ զազերի 2:1 մոլային հարաբերությամբ (ըստ մոլային զանգվածների աճի) խառնուրդի միջին մոլային զանգվածը ($q/\text{մոլ}$):

39

Որքա՞ն է մեծ մոլային զանգվածով զազի 2212,21 q նմուշում ջրածին տարրի ատոմների նյութաքանակը (մմոլ):

(40-41). Ացետիլենը լուծել են ացետոնում և ստացել 465 գ զանգվածով հազեցած լուծույթ։ Փորձի պայմաններում ացետիլենի լուծելիությունը 16,25 գ է 100 գ ացետոնում։

40 *Ի՞նչ ծավալով (մլ) ացետոն ($\rho=0,8 \text{ գ/սմ}^3$) է պահանջվել լուծույթը պատրաստելու համար։*

41 *Ի՞նչ ծավալով (լ, ն.պ.) ացետիլեն է լուծվել ացետոնում։*

(42-43). Անօրգանական կրկնակի աղի բյուրեղահիդրատի 22,65 գ նմուշը տաքացման պայաններում նատրիումի հիդրօքսիդի լուծույթում լուծելիս անջատվել է 1,12 լ (ն.պ.) սուր հոտով անգույն գազ և 3,9 գ մետաղի(III) հիդրօքսիդի նստվածք, որում մետաղի զանգվածային բաժինը 34,62 % է: Գազի և նստվածքի անջատումից հետո մնաց միայն նատրիումի սուլֆատ պարունակող 37,9 գ լուծույթ:

42

Որքա՞ն է բյուրեղաջրի քանակը (մոլ) բյուրեղահիդրատի մեջ մոլում:

43

Որքա՞ն է նատրիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%) ալկալու ելային լուծույթում:

(44-45). Այսումինի սուֆիդի որոշակի զանգվածով նմուշը զգուշորեն լուծել են 44,8 գ կալիումի հիդրօքսիդ պարունակող 212 գ ջրային լուծույթում, ինչի արդյունքում ստացվել է թափանցիկ լուծույթ, որում առկա է նաև 26,4 գ կալիումի սուֆիդ:

44 Որքա՞ն է կալիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%) վերջնական թափանցիկ լուծույթում:

45 Որքա՞ն է այսումինի սուլֆիդի նմուշի զանգվածը (գ):

(46-47). Կալիումի քլորատի և կարբոնատի խառնուրդին ավելացրել են բավարար քանակով աղաթքու և անջատված գազերը սենյակային ջերմաստիճանում անցկացրել կալիումի հիդրօքսիդի 10 % զանգվածային բաժնով լուծույթի մեջ: Գազերն ամբողջությամբ փոխազդելուց հետո (մինչև չեզոք աղեր) ստացվել է 17,95 գ զանգվածով չորս լուծված նյութերի հավասարամոլային խառնուրդ պարունակող լուծույթ:

46

Որքա՞ն է կալիումի քլորատի մոլային բաժինը (%) աղերի ելային խառնուրդում:

47

Որքա՞ն է կալիումի հիդրօքսիդի լուծույթի զանգվածը (q):

(48-49). 61,4 գ քլորաջրածին պարունակող 215,2 գ աղաթթվի մեջ որոշակի զանգվածով մանգանի(IV) օքսիդ ավելացնելիս անջատվել է գազ և քլորաջրածնի զանգվածային բաժինը լուծույթում նվազել է մինչև 8 %: Մնացած լուծույթին բավարար քանակով նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս անջատվել է նստվածք: Անջատված զազր լուսավորման պայմաններում անմնացորդ փոխազդել է 6 գ էթանի հետ, իսկ ստացված քլորածանցյալների խառնուրդը հիմնային միջավայրում հիդրոլիզի ենթարկելիս ստացվել է թթվածին պարունակող օրգանական նյութերի խառնուրդ:

48

Որքա՞ն է մնացած լուծույթին բավարար քանակով նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս լուծույթից անջատված նստվածքի և սկզբնական լուծույթին ավելացրած մանգանի(IV) օքսիդի զանգվածների տարրերությունը (մգ):

49

Որքա՞ն է քլորածանցյալների հիդրոլիզի արդյունքում ստացված $Cu(OH)_2$ -ի հետ չփոխազդող օրգանական նյութի զանգվածը (մգ):

(50-51). Հաջորդաբար միացած կեկտրոլիտային բաժակների միջով, որոնցից առաջինը լցված է պղնձի սուլֆատի 25 % զանգվածային բաժնով 76,8 մլ ջրային լուծույթով ($\rho=1,25 \text{ g/cm}^3$), իսկ երկրորդը՝ նատրիումի քլորիդի 13 % զանգվածային բաժնով 75 մլ ջրային լուծույթով ($\rho=1,2 \text{ g/cm}^3$), անցկացրել են հաստատուն կեկտրական հոսանք և կեկտրոլիզը շարունակել մինչև առաջին լուծույթի գունազրկվելը։ Այնուհետև առաջին և երկրորդ լուծույթները տեղափոխել են երրորդ բաժակի մեջ, իսկ կատողի վրա անջատված մետաղը քանակապես լուծել են ազոտական թթվի 54 գ ջրային լուծույթում, ինչի արդյունքում ստացվել է ըստ ջրածնի 17 հարաբերական խսությամբ գազային խառնուրդ։

50

Որքա՞ն է երրորդ բաժակում գոյացած չեղոք աղի զանգվածը (մգ):

51

Որքա՞ն է ազոտական թթվի զանգվածային բաժինը (%) ջրային լուծույթում։

(52-54). Ազոտով լցված փակ անոթում տաքացրել են արծաթի նիտրատի, կալիումի նիտրատի և պղնձի 43,6 գ խառնուրդը՝ մինչև հնարավոր ռեակցիաների ավարտը։ Ստացվել է ելանյութեր չպարունակող 35,8 գ պինդ մնացորդ և 4,48 լ (ն.պ.) գազերի խառնուրդ (անոթում առկա ազոտի ծավալն անտեսել):

52 Որքա՞ն է օրսիդի ծավալային բաժինը (%) գազերի խառնուրդում:

53 Որքա՞ն է օրսիդի զանգվածը (q) ստացված պինդ մնացորդում:

54 Որքա՞ն է մեծ մոլային զանգվածով աղի մոլային բաժինը (%) նյութերի ելային խառնուրդում:

(55-57). Սպիտակուցի բաղադրության մեջ մտնող միաամինամիակարբոնաթթվի 4,68 գ նմուշն այրել են թթվածնի ավելցուկում: Այսման արդյունքում ստացված նյութերը նորմալ պայմանների բերելուց հետո անջատվել է 3,96 գ ջուր և մնացել է 5,376 լ գազային խառնուրդ, որը ավելցուկով ալկալու լուծույթի միջով անցկացնելիս ծավալը փոքրացել է 6 անգամ, իսկ չկանված գազային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի 15 է:

55 Որքա՞ն է ամինաթթվի մեկ մոլեկուլում ատոմների թիվը:

56 Որքա՞ն է վերցրած թթվածնի ծավալը (մլ, ն.ա.):

57 Որքա՞ն է նույն բաղադրությամբ իզոմեր α -ամինաթթուների թիվը:

(58-60). Ըստ զանգվածի 40 % ծծումբ պարունակող ծծմբի օքսիդի 1 գ նմուշը 50 մլ ծավալ ունեցող զորված անոթում տեղավորելիս և մինչև 367°C տաքացնելիս, անոթում ստեղծվել է $1,66 \cdot 10^3$ կՊա ճնշում ($R=8,3 \text{ J/K} \cdot \text{mol}$, $T_0=273 \text{ K}$):

58 Որքա՞ն է անոթում առկա զազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (q/mol):

59 Որքա՞ն է ելային օքսիդի փոխարկման աստիճանը (%):

60 Ծծմբական թթվի 10 % զանգվածային բաժնով քանի՞ զրամ լուծույթին 100 գ ելային օքսիդ ավելացնելիս կստացվի անջուր ծծմբական թթու: